ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1943–1945 թթ.)

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի դժվարին օրերին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը խոշոր իրադարձություն էր հանրապետության գիտական և մշակութային կյանքում, նշանակալից երևույթ հայ ժողովրդի բազմադարյան պատմության հոգևոր զարգացման ընթացքում: 1943 թ. հոկտեմբերի 29-ին Խորհրդային Միության կառավարությունը որոշում ընդունեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (ԱրմՖան) հիման վրա Հայաստանի գիտությունների ակադեմիա ստեղծելու մասին[1]: Շուտով, նոյեմբերի 10-ին, Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը իր № 702 որոշմամբ հռչակեց Հայկական ԽՍՀ ԳԱ կազմակերպումը[2]: «Հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությունը մեկ միասնական ղեկավար կենտրոնում միավորելու ե ի շահ գիտական աշխատանքի հետագա, ավելի նպատակասլաց զարդացման,– նշված էր այդ որոշման մեջ,– ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիման վրա Հայաստանի մայրաքաղաք Երևանում կազմակերպել Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա»[3]: Նոյեմբերի 25-ին Ժողկոմխորհը հաստատեց ԳԱ հիմնադիր անձնակազմը՝ բաղկացած 23 իսկական անդամից (ակադեմիկոսից), ԳԱ կանոնադրությունը և կառուցվածքը: Ակադեմիայի կազմի մեջ մտան 24 գիտահետազոտական տարբեր հիմնարկներ, ընդ որում ԱրմՖանի բոլոր ինստիտուտներն ու սեկտորները, ինչպես նաև առանձին ժողկոմատների, գերատեսչությունների, Երևանի պետական համալսարանի գիտական մի շարք օջախներ[4]:

Հայաստանի ԳԱ հանդիսավոր բացումը և առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 1943 թ. նոյեմբերի 29-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական թատրոնում: Բացման խոսքում իսկական անդամներից ամենատարիքավոր ակադեմիկոս, լեզվարան Ստեփան Մալխասյանցը «արտահայտեց բոլոր հայ գիտնականների, մտավորականության, ամբողջ հայ ժողովրդի անհուն բերկրանքը Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպման առթիվ. նա հայտնեց, որ ազգային հզոր գիտահետազոտական կենտրոն ստեղծելու նկատմամբ հայ ժողովրդի դարավոր իղձը կարող էր իրականանալ և իրականացավ միմիայն խորհրդային իշխանության օրոք, որն ստեղծեց և ապահովեց բոլոր պայ-

---

[1] *Տե՛ս* Советская наука. Итоги и перспективы. М., 1982, с. 538.

[2] *Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 16, գ. 747, թ. 1–1 շրջ.: «Սովետական Հայաստան», 12.XI.1943:*

[3] *Նույն տեղում:*

[4] *«Սովետական Հայաստան», 26.XI. 1943:*

մանները Խորհրդային մեծ Միության մեջ ապրող բոլոր ժողովուրդների կուլտուրայի բարգավաճման համար»[5]: Ընդհանուր ժողովը ԳԱ առաջին պրեզիդենտ ընտրեց Հովսեփ Օրբելուն, փոխպրեզիդենտներ՝ Վիկտոր Համբարձումյանին և Վարդան Գուլքանյանին, նախագահության անդամ՝ Սահակ Կարապետյանին: Հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ ընտրվեց Գրիգոր Ղափանցյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքի՝ Խաչատուր Կոչտոյանցը, ֆիզիկամաթեմատիկական և բնական գիտությունների բաժանմունքի՝ Իվան Եղիազարովը, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի՝ Միքայել Թումանյանը: ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Վ. Լ. Կոմարովը ընտրվեց Հայկական ԽՍՀ ԳԱ պատվավոր անդամ: Առաջարկություն մտցվեց ակադեմիկոս քարտուղարի ընտրությունը հետաձգել մինչև այն ժամանակ, երբ Երևանում կլինեն ակադեմիայի բոլոր անդամները, նախագահությանը հանձնարարվեց ընտրել և հաստատել ԳԱ նախագահության գիտական քարտուղար՝ ակադեմիկոս քարտուղարի պարտականությունների համապատասխան մասը կատարելու համար: ԳԱ նախագահության 1943 թ. դեկտեմբերի 15-ի նիստում նախագահության գիտական քարտուղար ընտրվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Խաչիկ Մոմջյանը[6]:

Հիմնադրման առաջին իսկ ամիսներից ակադեմիայի գիտնականները լայն հետազոտություններ ծավալեցին հիմնարար և կիրառական գիտությունների մի շարք բնագավառներում, որոնք կարևոր նշանակություն ունեին երկրի ժողովրդական տնտեսության զարգացման և պաշտպանունակության ամրապնդման պրոբլեմների լուծման գործում: Միաժամանակ սկիզբ դրվեց գիտական նոր ուղղությունների: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց հայագիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրությանը՝ շարունակելով անցյալի լավագույն ավանդույթները:

Ձանդրադառնալով Հայաստանի ԳԱ գիտահետազոտական աշխատանքների լուսաբանմանը, արխիվային փաստաթղթերի ու նյութերի հիման վրա համառոտակի ներկայացնենք ակադեմիայի գիտակազմակերպական գործունեության երկու տարվա արդյունքների ընդհանուր բնութագրի վերաբերյալ վիճակագրական որոշ տվյալներ: Այսպես, 1944 թ. ԳԱ չորս բաժանմունքներն ընդգրկում էին 28 գիտահետազոտական հիմնարկներ, որտեղ աշխատում էին ԳԱ 25 իսկական անդամներ և թղթակից անդամներ, 55 դոկտորներ և պրոֆեսորներ, 131 գիտությունների թեկնածուներ, 147 ավագ և 149 կրտսեր գիտաշխատողներ, 161 գիտատեխնիկական աշխատակիցներ՝ ընդամենը 668 հոգի[7]: Եթե 1944 թ. սկզբին ԳԱ-ն ուներ 20 ասպիրանտ, ապա աշնանը՝ 47 ասպիրանտ[8]: Դոկտորական դիսերտացիաներ էին պաշտպանել 6, իսկ թեկնածուական՝ 11 հոգի[9]: Մարտ ամսին ստեղծված գիտական պրոպագանդայի խորհուրդը զգալի և արդյունավետ դիտալուսավորական աշխատանք ծավալեց հանրապետության բնակչության մեջ՝

---

[5] ՀԱԱ, ֆ. 766, ց. 6, գ. 160, թ. 1: «Սովետական Հայաստան», 30.XI.1943:

[6] ՀԱԱ, ֆ. 766, ց. 6, գ. 161, թ. 1:

[7] Նույն տեղում, ց. 6, գ. 249, թ. 1–1 շրջ.:

[8] Նույն տեղում, թ. 9 շրջ.:

[9] Նույն տեղում, թ. 10:

կազմակերպելով դասախոսություններ, ռադիոելույթներ, հրապարակելով գիտահանրամատչելի հոդվածներ ու գրքույկներ: Անցկացվեց 356 դասախոսություն, որից հումանիտար գիտությունների գծով՝ 139, բնական գիտությունների գծով՝ 201 և լեկտորիումի գծով՝ 16, ընդգրկելով մոտ 28807 մարդ, 13 ռադիոելույթ և այլն[10]: ԳԱ ֆունդամենտալ գրադարանն ու նրա մասնաճյուղերը ունեին 123563 գիրք ու 44613 պարբերական, իսկ ԳԱ համակարգում գտնվող 14 գրադարանների համար ձեռք էին բերվել 10059 գիրք և 5010 հանդես: 1944 թ. ընթացքում ակադեմիան հրատարակել էր 40 աշխատություն՝ 246,5 մամուլ ծավալով: Ակադեմիայի կենտրոնական ապարատին հանձնվեց Աբովյան փողոցի № 61 շենքը, կառուցվեց բնակելի շենքի մի մասը, սկսվեց Բյուրականի աստղադիտարանի շենքի կառուցումը[11]:

1945 թ. ԳԱ 38 գիտահետազոտական հիմնարկներում ընդգրկված էին 32 ԳԱ իսկական անդամներ և թղթակից անդամներ, 43 գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ, 154 գիտությունների թեկնածուներ, 130 ավագ և 151 կրտսեր գիտաշխատողներ, 182 գիտատեխնիկական աշխատակիցներ՝ ընդամենը 692 հոգի[12]: Ա՛ռ 1945 թ. դեկտեմբերի 31-ը ակադեմիան ուներ 84 ասպիրանտ, այդ թվում 6 հոգի՝ արտադրությունից չկտրված[13]: 1945 թ. ընթացքում կազմակերպվեց 490 դասախոսություն, որից 199-ը հասարակական գիտությունների գծով, 291-ը՝ բնական և տեխնիկական գիտությունների գծով[14]: ԳԱ համակարգի գրադարանների գրքային ֆոնդը հարստացավ 40000-ից ավելի միավորով՝ 1946 թ. հասնելով 195000 միավորի: Լրացվեց և տպագրության պատրաստվեց Արմֆանի և ԳԱ բոլոր հրատարակությունների մատենագիտական ցանկը[15]: Հրատարակվեցին «Տեղեկագիր հասարակական գիտությունների» (6 համար), «Տեղեկագիր բնական գիտությունների» (4 համար), «Զեկույցների» 8 համար, ինչպես նաև 40 այլ աշխատություններ[16]:

1945 թ. շարունակվում էին աշխատանքները ակադեմիական հիմնարկների նյութատեխնիկական բազան ամրապնդելու ուղղությամբ: Սկսվեցին Բյուրականի խոշոր աստղադիտարանի կառուցման աշխատանքները, ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտը Արագած լեռան վրա կազմակերպեց մշտական կայան-լաբորատորիա, ջրաէներգետիկ ինստիտուտը ձեռք բերեց այնպիսի մեծ լաբորատոր բազա, ինչպիսին էր ջրաէլեկտրական լաբորատորիան և որի առաջին հերթի գործարկումը տեղի ունեցավ նոյեմբերի 20-ին:

1945 թ. ընթացքում հրավիրվեց ԳԱ ընդհանուր ժողովի երեք նիստ: Հուլիսի 27-ին և օգոստոսի 2-ին տեղի ունեցավ ակադեմիայի ընդհանուր ժողովի գիտական նստաշրջանը: ԳԱ ընդհանուր ժողովն իր օգոստոսի 4-ի

---

10 Նույն տեղում:
11 Նույն տեղում, թ. 13:
12 Նույն տեղում, գ. 295, թ. 1:
13 Նույն տեղում, թ. 7 շրջ.:
14 Նույն տեղում, թ. 8–8 շրջ.:
15 Նույն տեղում, թ. 9–10:
16 Նույն տեղում, թ. 7:

նիստում հաստատեց ակադեմիայի թղթակից անդամների հետևյալ կազմը՝ Արմեն Թախտաջյան, Խորեն Երիցյան, Անդրանիկ Հովսեփյան, Ստեփան Վամբարյան, Հարություն Մաղաքյան, Նիկողայոս Մայսուրյան, Լևոն Մելիքսեթ-բեկ, Արմենակ Նազարով, Արտաշես Շահինյան, Միքայել Զայլախյան, Բորիս Պետրովսկի, Ալեքսեյ Ջիվելեգյան, Նորայր Սիսակյան, Լևոն Վարդանյան, Բարդուղիմեոս Ֆանարջյան: Ընտրվեցին նաև ՀԽԱՀ ԳԱ արտասահմանյան անդամներ՝ սփյուռքահայ նշանավոր գիտնականներ, էլեկտրական մագնիսական դաշտի տեսության ու էլեկտրական մեքենաների տեսության բնագավառների մասնագետ Արամ Բոյաջյանը (ԱՄՆ) և մանրէաբան-համաճարակագետ, Փարիզի Լ. Պաստերի անվան ինստիտուտի ախտաբանական հյուսվածաբանության և մանրէաբանության լաբորատորիայի վարիչ Երվանդ Մանվելյանը (Ֆրանսիա)[17]:

Այսպիսով, Հայաստանի ԳԱ գիտակազմակերպական գործունեության մոտ երկու տարվա ընթացքում հիմնականում ձևավորվեցին մեր հանրապետության գիտական մտքի կենտրոնի ստորաբաժանումները, զգալի աշխատանքներ կատարվեցին դրանց նյութատեխնիկական բազան ամրապնդելու, գիտական համապատասխան կադրերով ապահովելու, հրատարակչական գործը ծավալելու, բնակչության շրջանում գիտալուսավորական ընույթի միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ:

[17] Նույն տեղում, թ. 6–6 շրջ.: